ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Արձանագրություն N 12

03. դեկտեմբերի 2018թվ.

Գ. Քասախ

2018թվականի դեկտեմբերի 03-ին ժ. 14[15]-ին Քասախի համայնքապետարանի վարչական շենքում սկսվեց Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի ավագանու 2018թ. դեկտեմբերի 3-ի N10 հերթական նիստը: Նիստը վարում է համայնքի ղեկավար՝ Ա. Մկրտչյանը, քարտուղարում՝ աշխատակազմի քարտուղար՝ Ն. Մկրտչյանը: Նիստին ներկա են նաև աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Ա. Հովհաննիսյանը: Նիստին ներկայացան ավագանու ինը անդամներ՝ Սեդրակ Հովհաննիսյանը, Վահե Ղազարյանը, Արման Աբրահամյանը, Արտակ Թովմասյանը, Հրաչիկ Գրիգորյանը, Մամիկոն Վարդանյանը, Հրաչիկ Ղազարյանը, Արթուր Մարդանյանը և Գևորգ Աբգարյանը: Նիստին անհարգելի պատճառով չներկայացավ ավագանու անդամ՝ Աղասի Արմենակյանը և հարգելի պատճառով չներկայացավ՝ Երեմ Աբրահամյանը: Իրենց հարցերն ավագանուն տալու համար մասնակցության ցանկություն էին հայտնել համայնքի բնակիչներ՝ Սպարտակ Ասատրյանը և Վիգեն Դավթյանը:

Խստիվ խախտելով ավագանու կանոնակարգը և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 9-րդ կետերը՝ ելույթ ունեցավ ավագանու անդամ Գևորգ Աբգարյանը, նա սկսեց խոսել օրակարգին չառնչվող թեմաներով, այնուհետև ելույթ ունեցան Արտակ Թովմասյանը, Արթուր Մարդանյանը և Արման Աբրահամյանը: Համայնքի ղեկավարի այն հորդորները, որ նիստը պետք է սկսել օրակարգին համապատասխան, մնացին անարձագանք, նա նշեց, որ ավագանու բոլոր անդամները տեղեկացված են եղել և ժամանակ է տրվել օրակարգի վերաբերյալ իրենց առարկությունները և առաջարկություններն օրենքով սահմանված կարգով պետք է գրավոր ներկայացվեր աշխատակազմին: Հաշվի առնելով այն

հանգամանքը, որ օրակարգային հարցերն կազմված էր օրենքի տառին համապատասխան և բոլոր նորմատիվ իրավական ակտերն Արդարադատության նախարարության կողմից ունեցել են դրական եզրակացություն, այնուամենայինվ ավագանու հինգ անդամներ՝ Գևորգ Աբգարյանը, Արտակ Թովմասյանը, Վահե Ղազարյանը, Արթուր Մարդանյանը և Արման Աբրահամյանը չցանկացան քննարկել: Դահլիճը լքեց ավագանու անդամ՝ Հ. Ղազարյանը:

Համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով նիստի օրակարգը դրեց քվեարկության ավագանու հինգ անդամներ՝ Գևորգ Աբգարյանը, Արտակ Թովմասյանը, Վահե Ղազարյանը, Արթուր Մարդանյանը, Արման Աբրահամյանը, բոյկոտեցին և հայտարարեցին, որ չեն լսելու օրակարգը, չեն հաստատելու և չեն ուզում մասնակցել քվեարկությանը՝ լքեցին դահլիճը:

Այսպիսով՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը՝ քվորում չապահովելու պատճառով, ավագանու նիստը համարվում է չկայացած:

Արձանագրում ենք նաև, որ ավագանու բոլոր անդամներն օրենքով սահմանված կարգով և ժամկետում պատշաճ կերպով տեղեկացված են եղել 2018թվականի դեկտեմբերի 3-ի ավագանու հերթական 10-րդ նիստի կայացման օրվա, ժամի, օրակարգի և ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ:

Համայնքի ղեկավար՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ_____